

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ· ԲԱՐՈՅԱԿԱՆ· ՊԱՏՄԱԿԱՆ· ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԹՒՄԲ· ԻԷ· ՏԱՐԻ· ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ· ԱՊՐԻԼ 1894 Թ·

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ ԻՄԱՍԻԵԼՈՅ»

«ԵԹԷ ՅԱՐԵՑԱՒ ԸՆԴ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՊԱՒԷՍԻՆԸՆ ԽՆԴՐԵՑԻՔ...»

Կող· Գ· 1·

Ի՞նչ մեծ աւետիք կայ, որ առաւել ուրախացուցիչ լինի քան այս երկնային ձայնը· կայ մի իրողութիւն տիեզերական պատմութեան մէջ, որ այնքան և անսահման բարիքներ բերած լինի մարդկութեան համար· քան այն, որ արտայայտուած է այդ խօսքերում· Քրիստոս՝ Աստուծոյ Որդին՝ յարեաւ մեռելներից· Քրիստոս՝ Աստուծոյ որդին՝ իւր մահով մահը ջախջախեց· Քրիստոս՝ Աստուծոյ Որդին՝ իւր յարութեամբ մեզ կեանք պարգևեց· Ահա սքանչելիք սքանչելեաց· ահա տիեզերական յաւաջադիմութեան անշեղ առանցքը·

Աստուած մարդացաւ· մարդացեալ Աստուածը մեռաւ· Աստուածամարդը յարեաւ և կենդանացուց այն մարմինն, որ միմիայն աշխարհի կատարածի ժամանակ պէտք է յառնէ· Մեռաւ նա, որ միութիւն է իսկական կեանքի և մարմնոյ· կենդանացաւ նորա հետ նա, որ հոգի էր և ի հոգի պէտք է դառնար·

Հաղարաւոր տարիներ զգայ մարդկութիւնն իւր ոչնչութիւնը մեղքերի անդունդի մէջ· «Ընցցին կեանք մեր իբրև զհետս ամպոյ...· Զի անցք ստուերի են կեանք մեր...»*· այս էր նորա կեանքի գաղափարը· Բայց ահա

* Իմաստ· Սող Բ· 5·

ժամանակը լրացաւ. մարդկութիւնը խոնարհուեց և իւր յոյսը միմիայն Ամենակարողի վրայ դրաւ՝ հաւատքով առ Նա դարձած. եկաւ Աստուած և անցաւորութեան մէջ թաւալող մարդուն մտոնակից արաւ իւր փառքին։

Մինչդեռ առաջ իւր անցաւոր ոյժերով հակառակորդը հպարտանում էր «իվերայ ամենայնի, որ անուանեալ իցէ Աստուած կամ պաշտօն»,* շատ չանցաւ և այժմ իւր փրկութիւնն հայցեց Նորանից որ «ի պատկեր իւրոյ բարերարութեանն արար զնա»։

Խնդրէ՛ և կստանաս, բաղխէ՛ և քո առաջ կբացուի փրկութեան դուռն, այս եղաւ այնուհետև մարդկութեան Փրկչի պատուիրանն առ իւր հաւատացեալը։

Դու Հայ մարդ, մի՞թէ այսով չես առաջնորդւում և դու. և ո՞ր բանխմացը կլինի անուղղայ անթիւ խրատներից յետոյ. ո՞ւմ սիրտն է թանձրացել և ո՞ւմ ականջները խլացել, որ չզգան այդ և չլսեն աստուածային ձայնի ճշմարտութեան։ Անցան գնացին Կայենները, նոքա այլ ևս չեն դառնալ. կենդանութեան ջրի այն կողմն են սեմթոյր այծերը, մինչդեռ սրբուել են աստուածային ջրով ս. Լուսաւորչի սպիտակափայլ գառները։

Լոյս է Հայաստանեայց ս. Եկեղեցու հովանու տակ. բայց աւա՜ղ. ցերեկուան հետևում է և գիշեր,** որ առանց գայթակղութեան չէ թողնում մարդուն և մի՞թէ գովելի կլինի այն արդարութիւնն, որ առանց փորձանաց է փայլում։ կարո՞ղ է պարծենալ զինուորն, եթէ իւր սենեակի մէջ է շողացնում իւր թուրը։

Ահա և դուք, մանկունք զինուորեալք Հայաստանեայց ս. Եկեղեցու. խաւարի դէմ մաքառելով պէտք է շողշողայ ձեր արդարութիւն։ Սակայն դուք ևս մարդ էք և չեն կարող ձեր արիութեան և առաքինութեան զէնքերը պահուիլ մեղաց խոնաւութեան ժանգերից. ուստի և ահա եօթը շաբաթ ժուժկալելով զրդռիչ ուռեսաներից ու խմիչքներից և ապականիչ շատախօսութիւնից և մրաքերից, ջանացիք մաքրել ձեր զէնքերը, վասնզի նիւթական զէնքը իւղով է մաքրւում մինչդեռ հոգևոր զէնքը բարեպաշտութեամբ և հաւատքով։

Դուք ձեր հոգին անցուցիք առաքինութեան ծերպերով և սրեցիք, սակայն կատարեալը միայն Աստուած է և Նա է որ քննում է մեր սրտի խորքերն և ներելով մեր մարդկային թուլութիւններն, ողջագուրում է մեզ հայրական սիրով ու մեզ կեանք պարգևում Իւր անսպառ կենդանութիւնից։ Ուրեմն խոնարհուեցէք, ձեր ոյժից շատ վեր բան էք խնդրում։ Այն որ չէք կարող ձեր անցական ոյժերով ձեռք բերել՝ Ամենակարողից էք սպասում։ դուք յարութիւն, փրկութիւն էք խնդրում մեղքերի ժանգերից և յաղթական զօրութիւն ձեր զէնքերի համար։

Ցեսնո՞ւմ էք. Քրիստոս մեռաւ ու թաղեց ձեր մահացուցիչ մեղքերն և յառնելով կեանք է տալիս ամենքին, որոնք միանում են Նորա հետ։ Նորա աստուածային յարութիւնը ձեր մարդկային յարութիւնն է։

Քա՞նի ուրեմն բերկրալի ձայն է՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», որ հրաւիրում է ձեզ՝ հաւատքով խոնարհութեամբ և հեղութեամբ մօտենալ և հաղորդուիլ Նորա անմահութեան բաժակին ու կցորդ լինել Նորա փառքին, և այս դրաւական է հանդերձեալ անշիջանելի կենաց։

«Տէր հաստատեաց զհիմունս Սիոնի, և նովաւ փրկեսցին խոնարհք ժողովրդեանն»։*

Ձեր Նոր-Սիոնը, Հայաստանեայց Կաթուղիկէն, Ս. Էջմիածինը հնչեցնում է լսելու ընդունակներին համար իւր ծիւղաւորութեան բոլոր ս. դաւիթներում աստուածային քաղցրը ձայնը.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Ա. Տ.-Մ.։

* Բ. Թեսաղ. Բ. 4.

** Յովհ. ԺԱ. 9. 10.

* Եսայ. ԺԴ. 32.